

ԿԱՐԻՆԵ ԱՇՈՒՂՅԱԼ

ՄԵՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի կարմրաշռայլ
Կիրակիներն անցան, անցան,
Դրոշներն են, ահա, վրաս,
Մերթ՝ որպես խենթ, խելակորույս
Գիրկընդխառնում և համբույրներ
(Երբ պատվիրանն ինքը անգոր,
Մունջ ու համր
Իր խախտումի
Մեղեդիին էր ունկնդիր)
Եվ մերթ՝ որպես մեղանչումի
Խարան անջինջ
(Մի օր մեղք էր, վեց օր՝ պատիժ):

Օգոստոսի վերջին, վերջին լիալուսին:
Գիշերվա մեջ
Շողշողացող և շառաչող
Պաղշիթ ջրվեժ,
Մոռացումի հմայական բառեր ասա,
Դրոշմները ջնջի՛ր, ջնջի՛ր...
Ննջում են քո ծոցում, ջրվեժ,
Ունկերս լի
Հեծկտանքներով ջրերի,
Աչքերս լի
Արտացոլքով լուսնալույսի,
Օրորիր ինձ, ջրվեժ, աննինջ:

Նման լուսնի շնչառության՝
Պայծառ, պայծառ,
Բառաշղթան
Ջրնգում է արծաթաձայն.
«Շաբաթների դեռ գալու են՝
Կարմրաշռայլ և յոթնօրյա
Կիրակիներ»:
Երանության երազաչափ:
Արթուն են, էլ ոչ մի ցնորք՝
Ջրվեժն անզուսպ քրքջում է,
Քրքիջի մեջ՝ անկիրակի
Իմ օրերի հեկեկանքը:

ԵՐԵԿՈ

Նորից երեկո՝ անոսկե-դեղին
Եվ նորից՝ կսկիծ ու դեղին լեղի:
Կիսատ արեգակ՝ հրաժեշտ տվող
Եվ կիսատ լուսին՝ արդեն ողջունող...
Անհաղորդ ու պաղ, պաղ ու

Իսկ ջրերի մեջ՝ անսեր, դառնաղի,
Արտասվում էին Ձկները Ոսկի,
Որ երբեք, երբեք չեն լինի հղի:
Նորից երեկո՝ անոսկե-դեղին
Եվ նորից՝ կսկիծ ու դեղին լեղի:

անհաղորդ:

Իմ անպահապան, իմ անհրեշտակ,
Չար գլխիս փլչող երկինքներիս զարդ,
Իմ արև կիսատ, իմ լուսին կիսատ,
Օրհնված իմ սեր, չօրհնված իմ

բախտ,

Դու՝ ուրիշինը՝ օրենքով հողի
Եվ՝ իմն՝ օրհնանքով բյուրհազար

աստղի,

Չենց այս երեկո մի հառաչի չափ,
Սրտի մի զարկի, արցունքի կաթի՝
Մի քիչ կարոտի ինձ ու քեզ մեկտեղ,
Կարոտի ինձ գեթ մի

համբույրաչափ,

Մի ձեռքով գրկիր մորմոքն իմ անափ,
Գեթ մի հայացքիդ լույսով ողողիր,
Վհատ երեկոն անուկե-դեղին:
Մի քիչ կարոտի ինձ ու քեզ մեկտեղ՝
Մեր սիրացնոր սրտերի զարկից
Եվ թրթիռներից ծնված սրտիկին,
Անուն նվիրիր մանկանն անանուն,
Մանկանը՝ կորած ջրերում կենաց,
Խենթանալու չափ կարոտից

հանկարծ:

Ոչինչ, որ չկա երեկո ուրիշ,
Չկա առավոտ, գիշեր ու ցերեկ,
Եվ իմն է միայն դառն այս երեկոն,
Դու մխիթարիր ինձ ստով անուշ,
Ասա՝ լույսերը արև ու լուսնի
Արտացոլվում են ջրերի մեջ ջինջ
Եվ փարվում Ոսկե Ձկներին հղի: